ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ „ԱՆՈՒՇ"-ից ՄԻ ԺԱՅԱԿ [1])

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆՑԻ

Վերջին ժամանակներս մեր գրականութեան Նորատունկ բուրաստանի մէջ մինը միւսի ետևից դուրս եկան նոր նոր ծաղիկներ։ Նորերումս փթթեց մի նոր ծաղիկ ևս, անուշահոտ և համեստ, ինչպէս վճիտ աղբիւրների ափերում բուսած մանուշակը Գուգարաց աշխարհում—

«Այն ճոխ գաւառում, ուր Ջաթինդաղի
Ուսերից պայծառ արևը ծագում,
Իրիկնապահին Ղարախաչ սարի
Ետևն է չիկնած երեսը ծածկում,
Ուր որ Քօշաքար, Լալւար ու Դըւալ,
Հսկայ պահնորդներ, իրանց շարքերով,
Բարձրացած խրոխտ և լայնածաւալ,
Հսկում են երկրին անքուն աչքերով,
Ուր ծեր Դէբէդը իւր վտակներով
Ամէն մի քարի մօտից անցնելիս՝
Վառւած վաղեմի յիշատակներով՝
Մերթ զայրանում է, մերթ փղձկում, լալիս...»

Ծննդարանը մարդուս երկրորդ ծնողն է։ Ծնողները տալիս են իրանց հոգու և մարմնի յատկութիւնները, ծննդարանն էլ սնուցանում է նրան իր հոգով ու մարմնովը։ Երանի նրան, ով որ Ադամի նման դրախտումն է ծնւում։ Եթէ կայ մեր երկրումը մի դրախտ, այդ Գուգարաց աշխարհն է։ Մեր բանաստեղծը—Յովհաննէս Թումանեանը—մեզ «Անուշ» բանաստեղծութիւն տալու համար՝ ծնւել ու սնւել է այդ անուշ երկրումը,—

---

[1]) *Յովհաննէս Թումանեանց «Բանաստեղծութիւններ» հատ.* II.

Այս հատորի մէջ, որ նոր է լոյս տեսել, զետեղւած են երիտասարդ բանաստեղծի բազմաթիւ ոտանաւորներ և երեք պօէմա—«Անուշ», «Մերժած օրէնք» և «Մարօ»։

«Այն սառն ու լստակ աղբիւրների մօտ,
Որ ապառաժից լորդառատ բըխում,
Աւազի վըրայ կայտառ, ծիծաղկոտ
Երեխի նման կրկչում են, խաղում.
Պարզ առուների դալար ափերին,
Որ սահանքաւոր ինջնում են փրփրած,
Ուր որ կենսաշունչ հովը լեռնային
Մերթ վազվըզում է, մերթ գըգում կամաց.
Ուր որ համասփիւռ բուրմունքը ծաղկի
Եւ ծըծըմբալին հոտը կայծակի
Խառնւում են իրար...»

Այստեղ ահա, ալա անուշ հովիտներում, Սարօն, որ մի հովիւ է, դեռ ևս պատանի, բայց ուժեղ և սրտոտ, սիրում է գեղեցիկ Անուշին.

Եւ մի հալեացքով պատանի Սարօն
Գրկեց Անուշի պատկերը հոգով,
Այն ինչ գեղեցիկ Անուշը Ներան
Սիրեց կուսական առաջին կըրքով»։

Սիրոյ ալա առաջին կայծը սկսում է բոցավառել Ներանց կուսական սրտերում և այնպիսի վիճակ է ստանում, որ բանաստեղծը հրաժարւում է նկարագրելուց, և վերջը բացականչում է—

Չէ...
Ես չեմ կամենում բառերով չնչին
Խօսել սիրավառ սրտի բոցերից,
Անպատմելի է սէրը առաջին,
Նա վեր է մարդու բոլոր խօսքերից...

Սակայն չարութեան ոգին, որ գիտէ ներս սողալ նոյն իսկ դրախտի մէջ, որ մարդուն Աստուծոյ երեսից ձգէ, արդարին եղեռնագործ շինէ, ալա չար ոգին իր պոչը խառնում է և Անուշի ու Սարօի սուրբ սիրոյ մէջ և Ներանց այդ կենսատու զգացմունքը մահատու դարձնում։ Մի հարսանիքում Սարօն և Անուշի եղբայրը՝ Մօսին՝ կռիւ են կենում, և որովհետև—

Ընկերների մէջ օրէնք է շատ հին,
Որ ալսպիսի մեծ բազմութեան միջում
Չը պէտք է գետնին զարկել ընկերին,
Այլ պէտք է անել հարկաւոր ջիջում։
Մոռացաւ Սարօն օրէնքն ու աշխարհք,
Երբ կանանց միջին Անուշին տեսաւ,

Սիրտըն ընկնեց բաբախել արագ,
Աչքերը խեղճի արնով լցւեցաւ.
Եւ այսպէս՝ մինչդեռ անհոգ էր Մօսին,
Սարօն իր բոլոր ուժը հաւաքեց,·
Ուջէն քաշելով՝ յանկարծ ընկերին
Գետին տապալեց և կրծքին չոքեց...
...Ցնծութեան ձայներ, ծափերի զարկից
Շարժւում, դղրդում են օճորք ու պատեր,
Իսկ նորահարսը փարդի քամակից
Նայում, գոլում են աղջըկէք, հարսներ...
...Եւ Թագաւորի Թախտիցը Սարօն,
Պարգև ստացաւ մի կարմիր խնձոր
Իսկ Մօսին, ուրախ հարսանքատանից
Դուրս գնաց խեղճ, սաստիկ վիրաւոր...

Այս պատճառով ահա, Սարօն այլ ևս չէր կարող սովորական կարգով նշանել Անուշին, Մօսին այլ ևս նրան աղջիկ չէր տալ։ Ինչ անէր խեղճ Սարօն, ինչ անէր Անուշը, որ ոչինչ մեղ չունէր։ Այսպէս անճարացած՝ Սարօն փախցնում է Անուշին և մի ամբողջ ամիս այնպիսի անմատչելի ձորերում է տանում, որ ինչքան փնտրում են, չեն գտնում։ Մի ամսից յետոյ հին ադաթով Սարօն Անուշին ուղարկում է հօրանց, որ այնտեղից պսակով դուրս բերի նորից, ինչպէս սովորաբար անում են այսպիսի դէպքերում։ Գիւղացիք ուրախանում են, աղջիկը խոստովանում է տէրտէրին, ինքը սիրում է Սարօին, որ իր կամքովն է փախել նրա հետ, որովհետև ուրիշ ելք չը կար։ Ամենքն էլ ժպտում են, մարդ են ուղարկում, որ Սարօն գայ, բայց Մօսին, որ չի կարողանում տանել Սարօի հասցրած այդ երկրորդ անպատուութիւնը, (քրոջը փախցնելը) դիմաւորում է նրան և հրացանի մի գնդակով գետին տապալում Դէբէդի ափերում...

Եւ մի քանի ընկեր տղէք
Դէբէդի ճոխ ափերին
Փոս փորեցին և սրտաբեկ
Ամփոփեցին հովւի դին։
Ծաղիկները այս հանդիսին
Բուրմունք տըւին դուրեկան,
Ջրագետն էլ անհղաձայն
Երգեց վսեմ շարական...

Այս աղետաւոր դէպքը չէր կարող տանել Անուշի սիրահար քնքուշ սիրտը, նա ցնորւում է և, (Օֆելիայի նման) Թափառելով գետափին, ծա-

ղիկներ է քաղում անշուշտ և նրանցով զարդարում իր սիրելու գերեզմանը, Անուշի տխուր երգերին ձայնակցելո՝

Վըշվըշում է գետը—վուշ, վուշ,
Ցորձանքներ է տալիս լորդ,
Եւ կանչում է—«Արի, Անուշ,
Արի տանեմ եարիդ մօտ...»